



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՇԽԵՑՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ  
Վ. ԶԻԼԱՎՅԱՆ

«13» 07 2020թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆԱԿԱՆ ԵՀՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՇԽԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆԱՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000051

Ձեռնարկողը՝

«Արանամ» ՍՊԸ

Դավիթաշեն 4 թաղ, 33/1 շ. 10 բն

Գործունեությունը՝

«Մոլիբդեն և մոլիբդեն պարունակող թափոնների  
վերամշակման արդադրամասի» շրջակա միջավայրի վրա  
ազդեցության գնահատման հաշվետվություն

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրենի պաշտոնակատար՝

Ա. Թարգյան



Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՀԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆԱՈՒԹՅԱՆ**

թիվ ԲՓ 900051

<<13 >> 07 2020թ.

**«Մոլիբդեն և մոլիբդեն պարունակող թափոնների վերամշակման  
արտադրամասի» շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման  
հաշվետվություն**

**Ներածական մաս.**

Ձեռնարկող՝

«Արանամ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
(ՇՄԱԳ) հաշվետվություն,  
նախագծային փաստաթուղթ

Տեղադրման վայրը՝

ք. Երևան /Ա կատեգորիա/

Նախատեսվող գործունեության իրականացման տարածքը գտնվում է Երևան քաղաքի Էրեբունի վարչական տարածքի Արին Բերդի 3/4 հողատարածքում, որը շրջապատված է վարելահողերով: Տարածքի մակերեսը կազմում է 0.77 հա, որտեղ առկա են վարչական շենք, արտադրական մասնաշենքեր և պահեստային շինություններ: Արտադրական հարթակի անմիջական մոտակայքում առկա բնակելի տունը գտնվում է 1560.0մ հեռավորության վրա:

**Նկարագրական մաս.** գործունեության նպատակն է իրականացնել Երևանի Էրեբունի աղբավայրում կուտակված շուրջ 37.0 մլn.տ արդյունաբերական թափոնների /«Արմենիամոլիբդեն» և «Մաքուր Երկաթ» ձեռնարկությունների արտադրական թափոնները/, վերամշակում և դրանից մոլիբդենի խտանյութի ստացում: Արդյունքում աղբավայրը մաքրվելու է, բարելավվելու է բնապահպանական վիճակը:

Արտադրամասը աշխատելու է 3 հերթափոխով՝ յուրաքանչյուրը 8 ժամ, տարեկան առավելագույնը՝ 350 օր կամ 8400 ժամ: Մնացած օրերին իրականացվելու է սարքավորումների ստուգում և անհրաժեշտության դեպքում՝ վերանորոգում: Արտադրամասի կողմից թողարկվող արտադրանքի ծավալը՝ ըստ 3 հերթափոխի, կազմելու է 50.0տ, իսկ ամսական կտրվածքով՝ 1000.0տ:

Նախատեսված երկրորդային հումքից ստացվող խտանյութը՝ լինելու է ավելի բարձր պարունակությամբ (մոտ 64%), քան Քաջարանից բերվող առաջնային հումքից ստացվող խտանյութը (մոտ 60%): Դրա հետ մեկտեղ նախատեսվում է ստանալ առաջնային հումք, որի վերամշակումից ստացվելու է մոտ 70% պարունակությամբ խտանյութ:

Ընկերության կողմից նախատեսվում է ցանկապատել թափոնները՝ սահմանական տեղամասը 2.0-ից 3.0մ բարձրությամբ քարե պարիսպով:

Մոլիբդեն պարունակող թափոնների համար նախատեսվում է կառուցելու համար երկաթքետոնե խցեր՝ 2.5մX2.3մ կողերով և 2.6մ բարձրությամբ, որոնք տարածվությունը՝ 4.3մX4.3մ կողերով և 4.0մ խորությամբ հորեր: Դրանց հատակը գումակագործություն է կառուցելու համար:



հաստությամբ խճով, որ ենթարկվելու է բիտումային ներծման և տոփանման: Յուրաքանչյուր բետոննե խցի հատակի հաստությունը նախատեսված է 0.2մ, իսկ պատերի հաստությունը՝ 0.15մ: Լցվելուց հետո բետոննե խցերի վերնամասը որմնապատվելու է 0.2մ հաստությամբ բետոնով և 1.0մ հաստությամբ տեղային գրունտով: Գրունտային ջրերից մեկուսացնելու նպատակով նախատեսվում է խցերի հորիզոնական և ուղղաձիգ մակերեսները պատել երկշերտ տաք բիտումով:

Մոլիբդեն պարունակող թափոնների տեղափոխման, մշակման կազմակերպման համար նախատեսվող աշխատանքներն իրականացվելու են մեկ փուլով: Ըստ ՇՄԱԳ հաշվետվության, նախատեսվում է մոլիբդեն պարունակող թափոնների վերամշակման հետևյալ տեխնոլոգիական գործըթացների հաջորդականությունը.

- արտադրական թափոնների բարձումը սնուցիչի մեջ, որտեղից էլ տեղափոխվում է առաջնային ջարդիչի մեջ,
- հաջորդ փուլում տեղափոխվում է երկրորդային ջարդիչ, որտեղ հումքը մանրացվելու է մինչև 0.5մմ տրամագծի մասնիկների,
- երրորդ փուլում գնդիկավոր աղացում այն վերածվում է փոշենման զանգվածի,
- չորրորդ փուլում փոշենման զանգվածը լցվում է 3.0մ բարձրությամբ պահոցների մեջ, որտեղից էլ դատարկվում է հորիզոնական ծողերից պատրաստված եռանկյունաձև տեխնոլոգիական սեղանների վրա,
- հինգերրորդ փուլում այն լվացվում է բենտոնիտային լուծույթով, որից հետո առաջացած մոլիբդեն պարունակող մասնիկները հավաքվում և համապատասխան չորացման ցիկլ անցնելուց հետո վերածվում են խտանյութի ու պահեստավորվում:

50.0ու մոլիբդենի խտանյութ ստանլու համար պահանջվելու է 2500.0կգ բենտոնիտի փոշի, որը լցվում է 20.0ու տարողությամբ թևավոր խառնիչով կահավորված ջրի տակառի մեջ: Մեկ արտադրական լիարժեք ցիկլ ապահովելու համար (1 լվացման ցիկլը տևում է 2 ժամ) տեղադրված են 2 հատ 20.0ու-նց ջրի տակառներ, որոնք աշխատելու են հաջորդաբար: Արտադրական ցիկլից հետո բենտոնիտի լուծույթը, որը պարունակում է զտված պազ, ուղղվում է 4000.0ու ծավալ ապահովող բենտոնապատ արտադրական փու՝ մեխանիկական մաքրում իրականացնելու նպատակով: Ավագից մաքրված ջուրը, հատուկ պոմպի օգնությամբ՝ որպես շրջանառու ջուր, նորից մղվում է ջրի տարողություն՝ հետագա օգտագործման համար: Բետոնապատ փոսի մաքրումը իրականացվելու է համապատասխան մեխանիզմներով և չորացնելուց հետո կարող է ծառայել որպես ցեմենտի որակի բարելավիչ:

Հաշվի առնելով, որ տեխնոլոգիական ցիկլ փակ է և ունի թաց բնույթ, չի պարունակում որևէ կարգի այրում կամ թրծման պրոցես, ուստի բացակայում են մթնոլորտային արտանետումները, հետևաբար տեխնոլոգիական ցիկլում գազամաքրման համակարգ չի նախատեսվում:

Արտադրամասի շահագործման ընթացքում սպասարկող անձնակազմի կենսագործունեության արդյունքում կառաջանա կենցաղային աղբ, որը սանհիտարական ծառայությունների միջոցով, պայմանագրային հիմունքներով, կտեղափոխվի քաղաքային աղբավայր: Զրամատակարարումը իրականացվում է Երևանի ջրամատակարարման ցանցից՝ միայն սպասարկող անձնակազմի կենցաղային կարիքների համար: Աշխատողները օգտվելու են տարածքում առկա ջրամատակարարման և կոյուղու ցանցերից:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում կառաջանա 740.0մ<sup>3</sup> ծավալի գրունտ, որից 721.5մ<sup>3</sup> օգտագործվելու է որպես հետլիցք, իսկ 18.5մ<sup>3</sup> բռնահողաշերտը՝ հարթեցված տարածքի բարեկարգման նպատակով:

Մթնոլորտային վնասակար արտանետումների քանակը նախատեսվող գործունեության իրականացման ժամանակատվածում կազմում է.



պարտադիր կարգով պահպանելով բնապահպանական, կառուցման և շահագործման հետ կապված բոլոր նորմերը:

2. Գործունեության ընթացքում իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների (ջուր, օդ, հող և այլն) մոնիթորինգ, իսկ արդյունքների, հետնախագծային վերլուծության ծրագիրը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմինների և հանրության համար:

3. Շահագործման աշխատանքների ընթացքում առաջացած շինաղբի (կենցաղային աղբ) տարածքից հեռացումը, ինչպես նաև ջրօգտագործումը, ջրահեռացումը և վտանգավոր թափոնների (պահեստավորում և տեղափոխումը, հեռացում) կառավարումը անհրաժեշտ է իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Արանամ» ՍՊԸ կողմից ներկայացված «Մոլիբդեն և մոլիբդեն պարունակող թափոնների վերամշակման արտադրամասի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացնություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարունակությամբ» պայմանագրությունը սահմանված է հայոց օրենսդրությամբ:

Փորձագետն

Վ. Ռախյան

